« զեղն առնուս , մէկ ձըկէն 40 լիտր եղ կու
« ելանէ . և զմիսն չեն ուտեր ։
« բ . Ձուկ , որ Փըլըչպալըղի ասեն (Թրա-
« ձուկն) ։ — գ . Փալքաճ ձուկն որ ի Սեւ
« ծովէն կու ելանէ , տափակ է և բոլոր ոսկր
« ունի ի վերան՝ որպէս գփուշ . Թեփ չունի .
« տապկեն ձիթով և շուրվայ անեն զաֆրա-
« նով և քացախով , քան զամենայն ձկունսն
« պատուական է ։
« դ . Լէվիրէք ձուկն ։ — ե . Փէհլաւ ձուկն .
« մինչեւ կէս կանգուն կու լինի . Թեփ ունի .
« միջի ձուն կու չորացընեն որպէս պչոր միս ,
« և 5 դրհմ . սպիտակ մի կու ծախեն . անուշ
« է և պատուական , ամենայն աշխարհն եւս
« տաւել խսկէնտէրիէ . կըղի մի կայ Ապախոր
« ասեն , Փէֆալ ձուկն անդ շատ կու լինի .
« և զձուն ուտեն և չորացընեն , և ամենայն
« աշխարհ , եւս տաւել Ֆռանգաց տունն
« Նաւորէք զայն տանին . 5 տհմ սպիտակ
« մի ծախեն ։ Եւ Փէֆէն այլ կու լինի և
« Ազախ . ապա գնով է , և արմաղան կու
« տանին . մոմով ծեփեր են , այնպէս երկիրէ
« երկիր կու տանին ։
« զ . Ձուկ որ Լաքէրտայ ասեն . ձմեռան
« ժամանակն գէր կու լինի , աղեն և չորա-
« ցընեն և ի մուխն կախեն որպէս պչորմիս .
« անուշ կու լինի և Թուրշի այլ դնեն աղով .
« և տանին երկիրէ երկիր . ի Թագաւորական
« կու ծախեն , և շատ խազինայ կու ժողովեն .
« Թեփ չունի . և շատ ուտելն՝ զեն է ։
« է . փուչուտայ ։ — ը . Պալամուտ ։ —
« թ . Ըսղումրի (Scumbre) ։ — ժ . Կօլեօզ ։
« — ժա . Ուլուֆէր ։ — ժբ . Ըստաւրիտ ։
« — ժգ . Ըզմարիտ ։ — ժդ . Թէքիր (Bar-
« beau) ձկանց Թագաւոր է . գունով կարմիր
« է . Թիզ մի կու լինի . միսն անուշ է . անգէն
« է . շիրիկով կու տապկեն ։ — ժե . Ձուկն
« Ըսպառի , որ տափակ է . շիրիկով տափկելն
« լաւ է . Թեփ ունի ։ — ժզ . Ձուկն Խիսխայ .
« տափակ է որպէս Կալքան . փուշ ունի
« ափի՛մ չափ է . միսն անուշ է . շիրիկով
« տափկելն լաւ է ։ — ժէ . Ձուկն Աթերի-
« նայ (Athérine) զոր ոմանք կոււմուշ պա-
« լըղի ասեն . մանր ձուկ է . Թեփ ունի .
« անգէն է քան զամենայն ձկունս . միսն
« անուշ է . շիրիկով տապկելն լաւ է ։

« ժը . Ձուկն Խամսի (Melette) , զոր ձմեռն
« շատ կու ելանէ , մանր ձուկ է . Թեփ ունի .
« անուշ միս ունի . ապա շատ ուտելն զհին
« ցաւն շարժէ . տապկելն լաւ է . չորացընեն .
« այլ և Թուրշի շինելն այլ լաւ է ։ Յորժամ
« ի Տրապիզոն քաղաքն ելանէ ձուկս այս ,
« մէկմէկի ետեւ կու տան , Թըմպուկ և
« քոս կու ծեծեն , խրախութիւն կու անեն .
« վասն այն Տրապիզոնցոց՝ Խամսի պալըղի
« կու կանչեն , և նոքա կու դիմարնան . զի
« այն աշխարհն պատուական է ձուկս այս .
« ապա Ըստամպօլ քաղաքն՝ հազարն սպի-
« տակ մի չեն առնուր , տաեն կու լինի ,
« անչափ շատ կու ելանէ ։
« ժթ . Ձուկն Թիրքող . ամռան ժամանակն
« կու ելանէ . փոքր ձուկ է , Թեփ ունի .
« միսն անչափ կակուղ է՝ որ ճորով կարես
« ձեռօքդ բռնել . անուշ է . շիրիկ եղով տապ-
« կելն (լաւ է) ։ Գիշերն ճրագ կու վառեն
« մէջ նաւին , ճրագի լուսուն կու գայ ակնատն
« կու անկանի . Թուրշի այլ կու շինեն . ա-
« նուշ է ։
« ի . Ձուկ մի այլ Թուրշի շինած կու բե-
« րեն ի Վենէտիկու , մէջ վարելերուն (տա-
« կառ) , նման Թոքող ձկան . անուշահամ
« է , և հոտն մշքահոտին նման է . քան
« զամենայն ձկանց Թուրշիքն պատուական
« է . զոր Ֆրանգ ազգն Սարտելեայ ասեն » ։
իա . Ղուլաճըղը ։ — իբ . Կայեայ պա-
լըղի ։ — իգ . Տիլ պալըղի (Sole) ։ — իդ .
Խաճի պալըղի ։ — իե . « Ղարահօզ . տափակ
« ձուկ մի է աչվին սեւ՝ որպէս զծարիր
« քաղած . շիրիկով տապկելն լաւ է ։ — իզ .
« Կուճէշ պալըղի . կանանչ ու ծիրանի գու-
« նով է . որպէս զարեգակն կու փայլէ ի մէջ
« ծովուն , փոքր ձուկ մի է , տապկելն լաւ է
« շիրիկով ։ — իէ . Իշաճ պալըղի . Օձաձուկն » ։
. իը . Տուրկէր պալըղի (S. Pietro): —
իթ . « Ձուկ մի կայ մէջ աւազի կու լինի .
« փոքր է , քան զմատ մի երկան . գագաթին
« փոքր փուշ ունի . եթէ հարկանէ զմարդ՝
« կու սպանանէ , թէ լիմոնի ջուր չի քսես
« ի վերան . քան զկարիճն վատ » ։ — լ .
Ըսքորպիտ ։ — լա . Թուզլա պալըղի . « քիթն
« կըռնկան նման » ։
լբ . Փուրպայ(ղա) պալըղի . « Գլուխն